

## Հայաստանի Հանրապետության բնական ռեսուրսները և նրանց հետագա զարգացման հեռանկարները

Չնայած ոչ մեծ տարածքին, Հայաստանի Հանրապետությունն ունի բավականին բարդ ու հետաքրքիր երկրաբանական կառուցվածք և հարուստ է բազմազան օգտակար հանածոներով:

Հայաստանում հայտնաբերված են 60-ից ավելի օգտակար հանածոներ, որոնցից ավելի քան 40-ը ունեն արդյունաբերական նշանակություն: Վերջիններիս տեսականին շատ մեծ է:

Ներկայումս պետական պաշարների հաշվեկշռում գրանցված են 465 հանքավայրեր, որոնցից 196-ը շահագործվում են, 15-ը նախապատրաստվում են շահագործման, 248-ը պահուստային են, 6 հանքավայր գտնվում են մանրակրկիտ հետազոտման փուլում: Նշվածից 24-ը մետաղային օգտակար հանածոների (պղինձ, մոլիբդեն, կապար, ցինկ, երկաթ, ալյումին, ոսկի, արծաթ և այլն) հանքավայրերն են, որոնցից 5-ը շահագործվում են: 375-ը ոչ մետաղային օգտակար հանածոների հանքավայրերն են, որոնցից 145-ը շահագործվում են, այդ թվում 198-ը երեսպատման շինարարական քարերի (գրանիտ, բազալտ, մարմար, կրաքար, տարբեր երանգի տուֆեր և այլն), 129-ը շինարարական նյութերի արտադրության հումքի (կրաքար, դոլոմիտ, ավազներ, կավեր և այլն) 11-ը բնագույն քարերի (փիրուզ, ագաթ, օբսիդիան, մարմարային օնիքս և այլն) և 37-ը բազմանպատակային օգտագործման հումքի (քվարցիտ, բենտոնիտային կավեր, աղեր, տրասներ, դոլոմիտ, կրաքարեր և այլն): 4-ը պինդ վառելանյութերի (ածուխ, տորֆ) հանքավայրերն են, 2-ը շահագործվում են:

Այդպիսով, պինդ օգտակար հանածոների հանքավայրերը 403-ն են, որոնցից ներկայումս 152-ը շահագործվում են:

Հատուկ տեղ են գրավում ստորերկրյա քաղցրահամ, թերմալ և հանքային ջրերը, որոնցից Ջերմուկը, Արզնին, Բջնին և Հանքավանը իրենց որակական հատկություններով չեն զիջում համաշխարհային համբավ ունեցող հանքային ջրերին: Ստորերկրյա ջրերի հանքավայրերի թիվը 62-ն է, որոնցից 44-ը շահագործվում են:

Բացի նշված հանքավայրերից Մանրապետության տարածքում հայտնաբերվել են նշված և մի քանի այլ օգտակար հանածոների 600-ից ավելի երևակումներ, որոնց զգալի մասը հեռանկարային են և օժտված են կանխագուշակումային զգալի ռեսուրսներով:

Հայաստանի երկրաբանական կառուցվածքի, օգտակար հանածոների և հանքավայրերի ճասին կարելի է երկար խոսել, սակայն նկատի ունենալով, որ հավաքը նվիրված է ոսկերիչների հիմնադիր համագումարին, ես կանգ կառնեմ հանրապետության ոսկու և բնագույն քարերի պաշարների և ռեսուրսների, նրանց հետագա զարգացման և իրացման հեռանկարների վրա:

Ներկայումս արդյունաբերական գնահատական են ստացել ոսկու և ոսկի պարունակող 18 հանքավայրեր, որոնցից 9-ը ոսկու և ոսկի-բազմամետաղային հանքավայրեր են, մնացած 9-ը համալիր հանքավայրեր են, որտեղ ոսկին ունի սահմանափակ նշանակություն և կապված է այլ մետաղների հետ:

Ոսկու հանքավայրերից երեքը բուն ոսկու հանքավայրեր են՝ Սոթքը, Մեղրածորը և Լուսաջուրը, որոնց արդյունաբերական նշանակությունը կապված է զուտ ոսկու և արծաթի հետ: Սրանցից շահագործվում են Սոթքի և Մեղրածորի հանքավայրերը, Լուսաջրի հանքավայրը մանրակրկիտ հետախուզման փուլում է: Նշված հանքավայրերում ոսկու պարունակությունը տատանվում է 3-20 գ/տ սահմաններում, արծաթինը՝ 7-25 գ/տ: Մնացած 6-ը ոսկի-բազմամետաղային տիպի են. Շահումյանի, Ազատեկի, Տերտերասարի, Լիճկվազ Թեյի, Սարջանի և Արմանիսի հանքավայրերն են, որտեղ ոսկու հետ առկա են պղինձը, կապարը, ցինկը և այլ հազվագյուտ և ցրված տարրեր: Այս հանքավայրերում ոսկու պարունակությունը տատանվում է 2-11 գ/տ, արծաթինը՝ 40-90 գ/տ, պղինձը՝ մինչև 1%, կապարը՝ 3-4%, ցինկը՝ 3-7%: Շահումյանի հանքավայրում կատարվում են շահագործման նախապատրաստական աշխատանքներ և փոքր ծավալների փորձնական հանույթ: Մնացած հանքավայրերը պահուստային են:

Համալիր հանքավայրերից հինգը ծագումով պղինձ-պորֆիրային են և կապված են հայտնի պղինձ-մոլիբդենային հանքայնացման հետ: Դա Քաջարանի, Ազարակի, Թեղուտի, Դաստակերտի և Լիճքի հանքավայրերն են, որտեղ ոսկին ունի ցածր՝ մինչև մի քանի տասնորդական գ/տ պարունակություն, սակայն հարստացման ժամանակ լավ կորցվում է և հավաքվում է միայն պղնձի խտանյութի (կոնցետրատի) մեջ: Շահագործվում են Քաջարանի և Ազարակի հանքավայրերը:

Կապանի, Ալավերդու և Շամլուղի պղնձի հանքավայրերի հանքաքարի մշակման և հարստացման ժամանակ ոսկին հավաքվում է պղնձի խտանյութի մեջ: Մեկ հանքավայրը՝ Ախթալայի բարիտ-բազմամետաղային է, որի հանքաքարի հարստացման ժամանակ ոսկին անցնում է ինչպես պղնձի, այնպես էլ կապարի և ցինկի խտանյութերի մեջ: Ախթալայի հանքավայրում ոսկու պարունակությունը հասնում է մինչև 1.0 գ/տ: Նշված հանքավայրերից շահագործվում է միայն Կապանի հանքավայրը, մնացածը պահուստային են:

Համալիր հանքավայրերը նույնպես ոսկու արդյունաբերության մեջ զգալի դեր ունեն:

Ոսկու և արծաթի ռեսուրսների հետագա զարգացումը կապված է արդեն հայտնաբերված նոր երևակումների և հանքավայրերի հետագա հետազոտման հետ, ինչը անհրաժեշտ ֆինանսավորման դեպքում կարող է եապես փոխել հանրապետության ոսկու պաշարների պատկերը: Ներկայումս երկրաբանահետազոտական աշխատանքների տարբեր փուլերում են գտնվում ոսկու և ոսկի-բազմամետաղային 5 հանքավայրեր:

Հանրապետությունում հայտնաբերվել, հետախուզվել և արդյունաբերական գնահատական են ստացել փիրուզի (Թեղուտ-3.6 տ), ագաթի (Իջևանի շրջանի Սարիգյուղ-1062 տ, Կարմիր քար-22.2 տ, Տաշիրի շրջանի Մեծավան-55.4 տ), օբսիդիանի (Արտենի-45 հ. տ., Հանքավան-41.4 հ. տ.), մարմարային օնիքսի (Նոր Խարբերդ-260 հ. տ., Արտավազդ-419.7 հ. տ.) 11 հանքավայրեր:

Կան նաև սապֆիրի (Մեղրի, Կալեր) դեմանտոիդի (նոնալանջ), ռուբինի (Վեդի) և հասպիսի (Հատեր-Կաչագան, Մեծավան, Հերիեր) երևակումներ, որոնք դեռ լրիվ ուսումնասիրված չեն:

Հարկավոր է նշել, որ ոսկու պաշարների վերարտադրության համար երկրաբանահետազոտական աշխատանքների անհրաժեշտ ֆինանսավորման, ներկայումս շահագործվող և պահուստային հանքավայրերի ռացիոնալ շահագործման, պղնձածուլարանի կառուցման և գործարկման դեպքում Հայաստանի Հանրապետությունը պոտենցիալ հնարավորություն կունենա տարեկան արդյունահանել և արտադրել 5-6 տոննա ծուլածո ոսկի:

